№ 19 Փետրվարի 8 (20) 1880 Փետրվարի 8 (20) № 19

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ում դիմենք։—Ներքին տեսութիւն։ Մի հրաւէր։ Նամակ Երևանից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ցունաստան։ Նամակ Թիւրքիայից։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։ Բանասիրական Աշխարհիկ լեզուի մասին։

ՈՒՄ ԴԻՄԵՆՔ

Լրագրական թղթակցութիւններով և մասնաւոր նամակներով վանից օգնութիւն են խնդրում այնտեղի սովատանջների համար։ Կովկասի հայեր, ի՞նչ պէտք է պատասխանենք։ Լրթէ լռենք,—դուք մեզ կը դատապարտէք, եթէ ձեր կողմից բաց ասենք,—ձեզ կը վերաւորենք, եթէ խոստանանք,—սուտ կասենք.... Ուրեմն ի՞նչ անենք։

Կովկասն էլ հացի է կարօտում, բայց վանցին դրան չէ նայում։ Նա մեզ անիծում է մեր սառնութեան համար։ Այդեստանի բաղերում մի շաբաթ զուր թափառելով, նա արմատներից էլ չէ կշտանում, նա թուլանում է, նա վայր է ընկնում, բայց շունչը արձակելիս, դարձեալ նա մեզանից է օգնութիւն սպասում։

Ի՞նչ անենք կովկասեցի հայեր.... Լռենք, ձեռք չը մեկնենք վանցուն. բայց ի՞նչ իրաւունքով, երբ նա ասում է. «Ես սովից մեռնում եմ, բայց իմ կեանքը քո կեանքից թանգ է. ես մեռնում եմ այնտեղ, ուր մեռել են մեր նախնիքները, ես մեռնում եմ այն հողի վրա, որի սիրոյ համար ինձ դար շարունակ փշեայ պսակ եմ կրել, իմ գերեզմանն է այնտեղ, ուր ուղղված են հինգ միլիոն աչքեր.... իսկ դու....»

Ի՞նչ անենք.... լռենք և նրա թուքը կուլ տանք.... Բայց ի՞նչ աչքով միմեանց երեսին նայենք։

Ոչ, լռել չենք կարող. գուցէ և մեզ նոյնպէս անհնարին է և օգնել.... Ապա՛, ի՞նչ անենք, ո՞ւմ դիմենք։

Դիմենք նախ այն մարդուն, որի վրա է դարձնում սովամահ հայը իր յետին հայեացքը, դիմենք նրան, որի աղօթքին է հաւատում յուսահատ աղգը իր մեղքը քաւելու և ապագան գտնելու համար, դիմենք նրան, որի դէմքն է կրօն, խօսքն է փրկութիւն։ Թող փրկէ նա մեր յուսոյ կենտրօնը, ազգի բունը, Վանը։ Թող փրկէ նա ոչ սեփական դրպանով, ոչ էլ սաղմոսով, այլ մի հատ կենդանի խօսքով։

Եւ այդ խօսքը սուրբ Գրիգորի տաճարից արձագանք կը գտնէ հազարաւոր եկեղեցիներում, որոնք սփռված են հեռու հիւսիսից մինչև Երուսաղէմ։

Եւ այդպէս կը փրկվի Վանը, երբ նրան ձեռք կը մեկնի Ս. Էջմիածինը, երբ նրան ձեռք կը մեկնի մեծ քահանայապետը....

Իսկ եթէ Էջմիածինը իր մի խօսքն էլ խնայեց, դիմենք այն ժամանակ մեր սրտին և նրանից գութ պահանջենք։

Բայց եթէ մեր սիրտն էլ լռեց,—թող այն ժամանակ մեր բերանը այլ ևս չամաչէ ասել. «Թողենք հայի անունին։»

Գր. Նիկողոսեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ ՄԱՍԻՆ

II

—

Մի միտք, որը վերին աստիճանի վնասակար է, այդ այն է, որ մեր գրական լեզուն իսկապէս աշխարհիկ չինելու համար իբր թէ հարկաւոր է նորա բոլոր բառերը և վերջաւորութիւնները և թէ դարձուածները «աշխարհաբառացնել», եթէ ինձ կը թոյլատրվի այսպիսի մի վայրենի բայ գործածել։ Եւ այդ ձգտումը երևում է շատերի մօտ ոչ թէ միայն գրաբարից վերաբերեալ, այլ մինչև անգամ աշխարհաբառի մէջ գոյութիւն ունեցող այս և այն ձև ու եղանակի դէմ։ Աշխարհաբառ չինել à tout prix։ Պիտի խոստովանվել, որ այդպիսիների նպատակը ամենաբարին է որ կայ աշխարհքում. դորանով նոքա ցանկանում են հեշտացնել լեզուի «մութիւնը»։ Էլ ինչ երկար մտածենք, մտածում են նոքա, քամի, սեռական քամու, ուրեմն եկեղեցի—եկեղեցու, ձի—ձիու. և կամ եկեղեցի—եկեղեցիներ, ինչու չէ ձի—ձիներ. և կամ խօսել—խօսեց, ուրեմն բերել—բերեց, տանել—տարեց, ասել—ասեց։ Այնպէս որ բաւական է մի հայ, լինի նա դիցուք հայկաբան, նստէ իր սենեակում և մի շաբաթուայ մէջ, դերձակի պէս, բոլոր միւս բայերն էլ մի կամ երկու-երեք օրինակների վրա կտրէ և այդպիսով կը ստանանք լեզուի մութիւն։ Մութիւն չը ստացանք, այլ միակերպութիւն, ձանձրալի միակերպութիւն.... Մանաւանդ տխրալի է տեսնել նոյն չաղի վրա մի վիպասան, որը իր նիւթերը ազգային կեանքից քաղելով, պիտի մտածէինք որ նաև լեզուի կողմից նա ներշնչված կը լինի նոյն ազգային հոգով։ Ահա ինչպէս է գրում մեր ականաւոր վիպասաններից մէկը. «Նոքա կերան, խմեցին, երգեցին և ուրիշ շատ գժութիւններ արեցին։ Հայաստանի այդ որ անկիւնումն և որ գրականապէս կրթված հասարակութեան մէջ է լսել «աներ» բայի արեցին անձռուն անցեալը, այդ ես չը գիտեմ. միայն թէ իմ ենթադրութիւն է, որ գրողը ցանկալով միութիւն հաստատել, խմեցին, երգեցին բայերից յետ պատճառ չէ տեսել, թէ ինչու չը պիտի ասել նաև արեցին, երանի՜ քերականներին. բոլոր գրողները նորա համար են մտածում, էլ ինչ հարկաւորութիւն կայ նորա կողմից լեզուի կանոնները ուսումնասիրել....

Ջանքալի միակերպութիւնը նախադասվում է ազգային հանճարի բազմերանգ պսակներից և դորան անուանում լեզուի «մութիւն»....

Մի այլ ձգտում, այդ՝ գրաբառից վերցրած մի քանի դարձուածների դէմ նկատելի հակակրութիւն է։ Խոստովանենք պարզ ի պարզոյ գրիչը նոր ձեռքն առած գրողը մեր աշխարհիկ լեզուի մէջ անցած գրաբառ դարձուածների և կամ բառերի դէմ է միշտ, որքան սովորական և մի և նոյն ժամանակ գեղեցիկ լինեն նոքա։ Բայց նմանապէս անհերքելի է, որ քանի նա աւելի վարժվում է, այդքան նա հաշտվում է իր վաղվայ ատածի հետ։ Ընդունած այդ որպէս իրողութիւն, հարցնում ենք դորա պատճառը։ Պատճառը պարզ է, որպէս արեգակ. քանի նա մեծանում է, գաղափարների հորիզոնը ընդարձակվում, ճաչակը նրբանում, նոյնքան նա զգում է այն պակասութիւնը, որը կայ բուն աշխարհաբառի մէջ իր գաղափարները աւելի ճիշդ արտայայտելու համար։ Բացի դորանից, նա չէ հասկանում թէ ինչու ի զուր տեղից մի աղամանդ պատուհանից փողոցը պիտի վայր ձգէ, որովհետև դա նորան հօրից է ժառանգած։ Ով փոքր ինչ ճաչակաւոր մարդ է, նա իսկոյն կարող է գնահատել գրաբառ մի քանի խօսքերի և դարձուածների թէ ներքին ոյժը և թէ արտաքին փայլը։ Մենք չը պիտի գործածենք ենջարան, ճեմելիք, գուշնաքեայ, համասփիւռ, հանապազ.իզուր, ըստ երևոյթին և հազար ուրիշ այդպիսի թէ հարկաւոր, թէ գեղեցիկ և թէ ներդաշնակ բառեր, որովհետև նոքա գրաբառից են մեզ մօտ անցել։ Այդ երեխայութիւն է շատերի կողմից այնպէս, որպէս միամտութիւն նոցա կողմից, որոնք, «Արարատի» լեզուին հետևելով, մտածում են հայկական կրօնը և ազգը պաշտպանել։

Մի կէտում, մանաւանդ գրողը կանչված է մեծ դեր խաղալ լեզուի մէջ. այդ նորա ստեղծողական դերն է, որով նա բառեր և դարձուածներ է ըստեղծում ու կամ եղածը գեղեցկացնում։ Ով մեծ գրողների գրուածքներ է կարդացել, նա նկատած կը լինի ի հարկէ, թէ ինչպէս մէկը, որը իր անձի մէջ մարմնացրել է ազգային հոգին, նա դատնում է, կարծես նոյն իսկ ազգը ինքը սորա ամբողջ հանճարեղ ոյժով։ Եւ արդարև այդպիսի հեղինակի ստեղծած թէ բառերը և թէ դարձուածները, թէպէտ բոլորովին նոր, դեռ չը լսուած, ամեն ընթերցողին թվում են հարազատ և դուք կը տեսնէք նոյն նորութիւնը բոլորի շրթունքների վրա անզգայի կերպով գործածվելիս։ Այդպիսի գրողին կանուանեն՝ ազգային մարդ, ազգային վիպասան, ազգային բանաստեղծ։ Այդ հանգամանքի վրա թեթև չը նայէք. դա մի բաղադրեալ երևոյթ է, որի մեկնելը փոքր ինչ խորհել է պահանջում։ Իւրաքանչիւր բառը, կազմելով լեզուի մի մասը, կրում է իր մէջ նաև նոյն լեզուի ազգային տարրերը։ Բաւական չէ որ դուք մի բառ ստեղծէք, որը դիցուք մտքի և քերական ձևերին համեմատ ճիշդ է. կարծես ազգային հոգին միայն քերական ձևերի մէջ լինի։ Մի բառ ազգայնացնելու համար հարկաւոր է բացի դորանից նաև այն ձևը տալ նորան, որի հետ ազգային ճաչակը հաշտվել կարողանայ։ Բառի երկարութիւնը, հնչումը, ներդաշնակութիւնը, միւս բառերի հետ կապվելու ընդունակութիւնը և այլն, այդ բոլորի մէջ ազգային ճաչակը պահանջում է մի յայտնի ուղղութիւն։—Մի պարոն, մի յայտնի աստիճանի բանաստեղծ անգամ, իր վէպի մէջ գործ է ածում նուրբ ճաչակը և ականջը վիրաւորող, կարելի է ասել, մի անհամ բառ. նա ստեղծում է մի բառ, որը պիտի նշանակէ ВЫВѢСКА և ինչ անուն է տալիս նորան.... «ծնանատախտակ»! Ուղիղ տաիտակեայ մի բառ, որը սանդնագործի բոլոր արհեստական կանոններով փայտից չինած մի անդուկի է նմանում....

Թէպէտ և ստեղծողական հանճար չէ պահանջում օտար բառեր գործածելը, բայց բոլոր բառերին պատկանեալ ընդհանուր պայմանը—ազգային բնաւորութիւնը—այստեղ ևս իր իրաւունքը պիտի տարածէ։ Այժմ մանաւանդ յաճախ գրում են ֆորմա, պոլիտիկա, ասենիզացիա և այլն օտար բառեր։ Ընդունենք օտար բառեր, բայց Աստծոյ խաթրին, վերցնենք այնպիսի ճիւղեր, որոնք ծառի հետ պատուաստվել կարողանան և կամ գոնէ հեռացնենք խոշնդոտները։ Ընթերցողներից շատերը գուցէ Եւրօպայի մեծ քաղաքներում չինացիներ տեսած լինեն, օտարոտի հագուստներով, երկար, համարեա մինչ գետին կախված քաքուլ ծամերով։ Բոլորեքեանք, գործերը թողած, դեռ նոցա վրա ապշած նայում են, իսկ շատերը նաև ծիծաղում։ Մեր խեղճ հայ թէ վրացի սաղանդարները Ֆիլադելֆիա գնալու ժամանակ այդ արդէն փարթից գնտեն, փոխեցէք նոցա բնիկ հագուստները, եւրոպացրէք նոցա—նոքա թատրոն անգամ կերթային առանց օտարի ուշադրութիւնը իրանց վրա գըրաւելու։

Նոյնը և մեզ օտար, եւրոպական հիւր բառերի հետ է պատահում։ Հազար ասացէք ֆորմա, ոչ մի հայ, իբրև հայ, բառի այդ ձևը գործ չի ածի խօսակցութեան մէջ, եթէ նա չէ ուզում իր ունկնդիրների ժպիտը շարժել։ Ինչպէս է այդ, մթե հայը այդ բառի օտարութեան վրա է ծիծաղում. ամենևին. ինչպէս ֆրանսիացին կամ գերմանացին չեն ծիծաղի չինացու վրա, որովհետև նա չինացի է։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՀՐԱՒԷՐ

—

Մարդ, երբ մի հայացք է ձգում տաճկահայոց վիճակի վրա, իսկոյն հազար սոսկում ու սարսափ է զգում։ Արդեօք այն տարածները մի՞թէ տանջանքի և չարչարանքի կամուրջ են ստեղծվել որ, ինչ և իցէ տառապանք և անարգանք հէնց նրանց վերայով անցկենայ։ Բաւական չէ այն հազար ու մէկ զոյն նեղութիւնները որ ծանրաբեռնված կրում էին հլու հեզութեամբ,—յանկարծ դուրս հանեց գլուխը անտանելի պատիժ սովը՝ անելով զոհեր։

Եւ ելաւ անհնար նրա ժանիքներին դիմադրել ոչ համբերութիւնով և ոչ ոյժով։ Հիմայ եթէ շուտով չը փրկվի ժանիքը,—կորչելու է հայրենիքը։ Այլ ևս չէ մնացել սահման համբերելու, զարկել է ժամը գործելու (օգնելու)։ Թող ընդհանուր ազգային, մանաւանդ հարուստ և փարթամ թիֆլիսցիք, խաւար աչքով և սառ սրտով չը նայեն այս աշխարհաւեր տեսարանին։ Բաւ է որչափ զեղութեան զուարճներով, շռայլութեան պատարագներով են զուարթացնում մարմինները։ Թոյլ տան իրանց՝ մի կարճ միջոց հեռանալ հոգեզուարթութեան։ Չէ երկար կեանքն սովի, ոչ աւել հինգ ամսից։ Թողնեն գնեա հինգ ամսվայ զուարճութիւնը, կըլուբի, թատրոնի և այլ ունայն նպատակներով վատնած գումարները՝ նուիրեն սովալուկներին։

ների փրկութեան համար: Երբ մեռ կամ հեռու մի ազգական է մեռնում, յայնժամ տարիներով սեազգեաց լինելով, հրաժարվում են ամենայն ուրախութիւն հանդէսներից և զուարճութիւններից: Այն հազարաւոր ազգայինք, որոնք սովից հարված անմահաց մեռանում են, մի՞թէ նոցա համար չէ անհրաժեշտ ժամանակաւոր զրկանք.... Այստեղ մի քանի խօսք չեմ կարողանում չասած՝ անցկենալ: «Մշակ» օրագրի շնորհիւ ազգը եռանդ ստացած, քանի տարի է սկսած հաստատում է բարեգործական նպատակներով հիմնարկութիւններ, կազմում է ընկերութիւններ զանազան թէ քաղաքներում թէ գիւղերում: «Մշակի» յորդորանքով չը մնացին հայաբնակ տեղեր, որ առատ նուէրներով չը մխիթարէին «Արարատեան» հանրածանօթ ազգաշահ ընկերութեանը: Սակայն «Մշակի» համաքաղաքացի թիֆլիսցիք, կանգնած լինելով պատուանդանում նորա, դժբաղդաբար մինչ օրս պատիւ են ունեցել ոչ ծանօթանալու և ոչ մասնակցելու այն ամենածանրաշահ ընկերութեան: Մինչ այս ատիճան խորին անտարբերութիւնը ոչ պակաս անարգանք է ենթարկել և ոչ թեթև յանդիմանութեան մեր օտարաբնակ ազգայիններից: Քաջայոյս պարտ ենք լինել, որ շուտով կը բառնան այն ամօթանքը իրանցից առատ նուէրներով նպաստամատոյց լինելով սովելոց և ընկերութեան:

Նիկողոս Նիկողոսեան

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

25 յունվարի

Նախորդ նամակովս յայտնեցի ձեզ քաղաքիս վարչութեան ամսիս 21-ին արած կարգադրութիւնը հացի մասին. այն կարգադրութեան մասին յայտնեցի ես իմ տարակուսանքը և այժմ չտապում եմ յայտնել, որ նոյն իսկ վարչութիւնը տեսնելով նոյն կարգադրութեան անիրագործելիութիւնը՝ նոյնը թողեց և ամսիս 24-ին նոր կարգադրութիւն արաւ, որ է այս.—քաղաքիս աղքատների անունները ցուցակագրել և տալ տոմսակ, որով իրաւունք ունենան որոշեալ հացարանից ստանալ ֆունտը 5 կոպէկով հաց՝ իսկ հարուստները գնելու են այլ խանութներից՝ ֆունտը 6 կոպէկով, ցուցակագրելու համար որոշված են 15 հայ և 10 թուրք իրաւասուներ. յոյս կայ որ 2 օրվայ ընթացքում կը ցուցակագրվեն բոլոր աղքատները:

Որովհետև հացթուխ թուրքերը միայն իրանց կրօնակիցներին են տալիս հաց՝ վճռվեց բանալ 4 խանութ էլ հայերի համար, որպէս զի թուրք ու հայի մէջ կռիվներ չը պատահեն. կը ցանկայի որ առանց հետևանքի չը մնար այս որոշումը: Ուրեմն այսուհետև հայերն իրանց աղքատների համար կունենան առանձին հացարան՝ թուով 4, իսկ թուրքերն իրանց համար նոյնպէս 4 հացարան. բայց թէ ինչ համեմատութիւնով պէտք է բաժանվի քաղաքային գումարով և կամ կամաւոր ստորագրված փողերով բերված ալիւրը թուրքերին ու հայերին, այդ չը գիտեմ դեռ ևս:

Ընդհանրապէս թանգ է նշանակված աղքատների համար ֆունտը 5 կոպէկը, հարուստների հետ համեմատելով, որովհետև զանազանութիւնը մի կոպէկի մէջ է միայն. իմ կարծիքով լաւ կը լինէր որ 9 կոպէկ հարուստների համար լինէր՝ 3 կոպէկ՝ աղքատների համար: Բայց կան այնպիսի աղքատներ ևս, որք 3 կոպէկով ևս չեն կարողանալու հաց գնել. արդեօք դոցա համար ով պիտի հոգայ.—Քաղաքը ստացել էր արքունի ամբարից 1000 խալվար ցորեն և կարծվում էր թէ փոխարինաբար է տրված, որ նորից վերադարձվի:

Բայց յայտնվեց, որ այդպէս չէ եղել, այլ գնվել է խալվարը 72 ռուբլիով.—Լսում ենք որ արքունի գանձարանից տրվելու է 35,000 ռուբլի Նախիջևանի, Օրդուբաթի և Ագուլիս գաւառներին ի նպաստ. այն ինչ՝ Երևանայ միւս գաւառների համար տակաւին յայտնի ոչինչ չը կայ:

Մասնաւոր նամակից իմացանք որ ալէքսանդրապոլցիք իրանց աղքատներին օգնելու համար կամաւորապէս ժողովել են 15,000 ռուբլի և անդառնալի կերպով նուիրել նրանց. ցանկալի է որ նոյն օրինակին հետևէին և մեր հարուստները յօգուտ այն աղքատներին, որ իրոք աղքատ են:—Արդէն երկու ամիս է որ 18—20 և 25 աստիճան ցրտեր են լինում. այսպիսի ցրտեր ոչ ոք չէ յիշում, որ տեսած լինի Երևանում:

Բնական է որ հացի կարօտ ու ցրտերի ենթարկված խոնաւ ու ցուրտ բնակարանների մէջ կացող աղքատ դասի մէջ անխուսափելի լինէին զանազան հիւանդութիւնները, բայց մինչև հիմայ մեր քաղաքացիք չը կարողացան մի թեթև բժշկարան հիմնել, էքաւոր ու անձեռնհաս հիւանդներին օգնելու համար: Այդպիսի մի բժշկանոց հոգիս թէ քաղաքին ծանր պարտքի տակ ձգէր. մեր կարծիքով տարեկան 2000—2500 ռուբլին չատ բաւական էր դեղերի, բնակարանի, վառելիքի և լուսաւորութեան համար. իսկ քաղաքիս բժիշկները կարող էին հերթերով ընդունել հիւանդներին ձրիապէս կամ մի թեթև վարձով.—Թէև քաղաքային վարչութեան բացվելու հետ՝ բացվեցան հասարակութեան առջև թշուառութեան դռներն ևս, բայց և այնպէս մեծայոյս ենք, որ քաղաքային վարչութիւնը քաջապէս գործ դնէ իր բոլոր միջոցները և չը թողնէ անօգնական աղքատներին ներկայ չարաց զոհ գնալու, մինչև որ անցնի չարիքը և զան հասնեն մեր երկրին յատուկ բարեկի օրերը: Այժմ պէտք է երևացնեն մեր՝ հարուստները իրանց առաքինութիւնը:

Սկզունի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Երևան, 29 դեկտ. 1879

1879-ի սեպտեմբերի 9-ին պ. Պապաջանեանցի հրատարակած բրոշիւրի ութերորդ երեսում Երևանի հոգևոր դպրանոցում տեսչից մի ծեծված աշակերտի համար ի թիս միւս ուսուցչաց ինձ ևս վկայ է կանչում: Մի և նոյն անցքի համար վկայ է կանչում և պ. Բէկնազարեանցը «Մշակի» 222 համարում «իմ պատասխանը պ. Վասակ Պապաջանեանցին» վերնագրով յօդուածի մէջ: Առաջինը իմ վկայութեամբ հաստատում է այդ անցքը, իսկ վերջինը հերքում է իմ վկայութեամբ:

Պ. Պապաջանեանցը նոյն բրոշիւրի 5—6—7 երեսներում գծից ցած մեր անցեալ տարվայ—78-ի յունվարի 14-ին հոգաբարձութեան ներկայացրած հրաժարականն է տպագրել, որի տակ ընթերցողը կը կարդայ հինգ ուսուցիչների ստորագրութիւնները: Այդ հրաժարականի համար պ. Բէկնազարեանցը, իրան պատասխանում հինգ ուսուցիչների դէմ, այս անարդար եզրակացութեանն է հանում հետևեալ նախադասութիւններով.—.... «Ինչու՞ նոյն զազէտ, էքսբարբոս» տեսչից չարաչար տանջված աշակերտները գրաւոր բողոք բարձրացնելով, գիտուն վարժապետների դէմ, չը կարողանալով նրանց տուաջարկած դրամական օժանդակութիւններից՝ պահանջեցին իրանց տանջող տեսչին»: Դեռ այս բաւական չէ՝ այս խօսքերն էլ վերջումն է կարկատում.—«Որիշ բաներ ևս կը հարցնի, բայց ի պատիւ նոյն ուսուցիչների, այսքանն էլ բաւական է.» Իբր թէ այս մեծ զրպարտանքից դեռ ևս խնայելով՝ թողնում է և միւս տասնաւոր յանցանքները: Դրեցէք պարոններ, ը՞ղրեցէք ինչքան կամենաք, բայց փոքր ինչ էլ ճշմարտութեան հետ բարեկամ եղէք... Ինչ եղան այս խեղճ ուսուցիչները: Հոգաբարձու պ. Պապաջանեանցը մի կողմից, պ. Բէկնազարեանցը միւս կողմից, այս երկու անձնաւորութիւնների համար էլ ասպարէզը բաւականին ընդարձակ է, իսկ ուսուցչի համար չատ նեղ: Երևակայեցէք, ընթերցողք, ուսուցչի դրութիւնը: Այս երկու իշխողներից որ մէկի սրտին դիպչի. մէկին գովել, միւսին պախարակել՝ այդ դժուար է և կամ ինչ իրաւունքով կարող եմ սրանց անձնականութեանը դիպչել, դա ապօրինի բան կը լինի: Միայն ես արդարութեան կողմն անցնելով ոչ մէկի կողմը մաղչալի անգամ հակվելով հրապարակաւ յայտնում եմ ստոյգը եղելութիւնների և ճշմարիտ համոզված եմ որ ոչ մէկին էլ չը պէտք է վիրաւորեմ, այլ ճիշտն այս է, որ ընթերցողներին ճշմարտութիւնը հաղորդեմ: Ինչ անենք, ուսուցիչ եղանք, գերի եղանք... Ասացի իմ նպատակն այն է, որ երկուսի գրածն էլ քննադատութեան ենթարկեմ, ոչ, միայն ես հերքում եմ այն կէտերը, որ ինձ են մատնացոյց անում: Որեմն, նախ՝ պ. Պապաջանեանցը ի զուր է արել, որ իմ անունը խառնել է միւս ուսուցիչների հետ իբրև վկայ այն ծեծված աչակերտի համար, որի ծեծվելուն ոչ ականատես եմ եղել և ոչ իսկ լսել, իսկ ինչ որ վերաբերում է մեր տուած հրաժարականին, որի մէջ բովանդակում է տասներկու յօդուած և որտեղ երրորդ ստորագրութիւնը իմն է, այդ իսկ իմ սեպհական համոզմունքովն եմ ստորագրել և ոչ մի ժամանակ չեմ կարող ուրանալ, որի դէմ արդար բողոքողներից մինն էլ ես էի: Երկրորդ, պ. Բէկնազարեանցը ի զուր է այդպէս կարծել և հրապարակաւ էլ յայտնում, որ կաշառել ենք աշակերտներին, թէև իրաւունք ունէր այդպէս կարծելու, սակայն չէ՞ որ ընթերցողի առաջ միանգամայն ուսուցչի վարկը ու պատիւն է վայր ձգում, որի համար ընթերցողը անտարակոյս կարող է կարծել, որ այդպիսի խարդախ ուսուցիչներին չը պէտք է թոյլ տալ որ և է ուսումնարանի դրան չեմքիցն անգամ ոտք կոխել, այն ինչ հարիւրաւոր մանուկներ են դաստիարակում նրանք:

78-ի ուսումնական տարվայ դեկտեմբերին մեր և տեսչի մէջ ունեցած պարզ յարաբերութիւնները հետզհետէ պղտորելու առիթը մեր մանկավարժական ժողովները եղան, որին մի կանոնաւոր ընթացք տալու համար, խորհրդակցութեամբ որոշեցինք մի փոքրիկ համառօտ կանոնագրութիւն կազմել, որոշելով մեր և տեսչի իրաւունքներն ու պարտականութիւնները: Իրան ասել, մենք միշտ հաշտ աչքով էինք նայում պ. Բէկնազարեանցին և մեզանից իւրաքանչիւրս գնահատում էինք պարոնի գործունէութիւնը և եռանդը: Թողնելով միւս բոլոր մանրամասնութիւնները՝ միայն այս կասեմ, որ մեր նպատակը և սուրբ որոշումը այդ ա-

---

է, այլ միայն նորա ծառերի վրա են խնդում, նոյնպէս և հայը այդ բառի վրա չի խնդայ, այլ միայն նորա պոչի վրա: Լեզուի մէջ արտասանութիւնը խաղում է առաջնակարգ դեր: Բայց յայտնի է, որ հայկական բառերը չեշտը իրանց վերջի վանկի վրա ունեն. ուրեմն հայը կասէ՝ ֆորմա: Ի հարկէ, այժմ դուք կը սկսէք նորա վրա ծիծաղել: Կուզէք իմանալ, որ ֆորմա, տակսա և այլ շատերը հայկական լեզուի հոգուն բնաւ հակառակ են. վերցրէք նոյն բառերի սեռականները՝ ֆորմայի, տակսայի և փորձ փորձէք չեշտեր դնել և բարձր ձայնով կարդալ՝ ֆՕրմայի, ֆՕրմայի, ֆՕրմայի....

Անհերքելի է, որ ֆորմա, տակսա և հազարաւոր ուրիշներ մեզ մօտ ռուսերէնից են մտել. բայց ռուսը, երբ ֆրանսերէն forme, taxe իրան սեպհականացրեց, գիտէր որ մի ա պիտի աւելացնէր, որովհետև նորա լեզուն, ինչպէս յայտնի է, իգական սեռի հետ խիստ հաշտ հարևանութիւն պահպանել գիտէ:

Ուրեմն ոչ ֆորմա, տաքստ, այլ ֆՕրմ, տաքս: Այս մեկնութիւնից յետ, աւելորդ է անգամ երկարաբանել այն բառերի մասին, որոնք ոչ թէ միայն ա, այլ «իաշ—ով են վերջաւորվում (կապիտուլյացիա, ասենիզացիա և այլն): Սոցա համար, գոնէ մեծ մասամբ, հարկաւոր է սեպհական, հասկանալի, բայց և քաղցր, որքան կարելի է կարճ և գեղեցիկ բառեր յօրինել—ահա հարցի միակ լուծումն:

Մի կէտ ևս յիշենք, և դորանով վերջացած կը լինի մեր գրուածքը: Այդ այն կարծիքն է, որը նմանապէս չատ տարածված է մեզանում, և դա պիտի խոստովանած, ամենաանմեղ և անվտանգ կարծիքներից է, որոնք իշխում են մեր լեզուի հարցի մէջ: Այն է՝ իբրև թէ մեր հայկական լեզուում միայն կան զանազան տարակուսանքներ, մեր լեզուում միայն, ուր իբր թէ անիշխանութիւն է տիրում ինչ մեզ կը վերաբերէ, մենք ընդհակառակը չենք կարող թագցնել այն բերկրութիւնը, որը զգում ենք տեսնելով հայկական լեզուն համատապէս կարճ միջոցում արդէն մի որոշ դէմք ստացած և մինչև անգամ բաւականի կանոնաւորված: Այդ կարելի է վերաբերել որպէս կովկասեան հայերին, նոյնպէս և տաճկա-հայերին, նոքա կովկասում, սոքա Ցանկաստանում: Իսկ եթէ լեզուի այս երկու մեծ բարբառները մի յայտնի աստիճանի իրանցից թեքվում են, դորա պատճառը երկար բացատրութիւնների կարօտ չէ: Երկու թէ երեք տարի սորանից առաջ մենք արդէն զՄՐչակումն, երկարապէս յայտնել ենք մեր կարծիքը նոցա միացնելու մասին: Այն յօդուածից մի միտք այստեղ կրկնելու արժանի է, որ նոցա միաւորութիւնը կարող է հաստատվել ոչ փոխադարձ յամառութեամբ, այլ ընդհակառակը հաշտութեամբ, մտքերի փոխարինութեամբ: Դա մի հասարակ պատերազմ չէ, ուր մասնակցողներից միայն մէկը պիտի յաղթէ, իսկ միւսը անպատճառ յաղթվէ, ինչպէս որ շատերը գուցէ կարծում են, այլ մի պրոցես է, որը վերջանում է միայն նորանով, ինչ մեզանում դրստվել են անուանում (aüsgleichen).—Մեր փոխադարձ հոգեկան յարաբերութիւնները պիտի լինեն հիմք այդ պրոցեսի համար. միայն այն ժամանակ մենք մի կը լինենք լեզուով, երբ մենք մեզ մի կը զգանք ազգով, այս բառի ամենաընդարձակ նշանակութեամբ:

Վերն նկատեցինք ,որ աշխարհիկ լեզուի անկատարելութիւնը միայն մերին չէ վերաբերելիս, այլ բոլոր լեզուներին, որոնք դեռ նոր են ոտը գետինը կոխում: Մինչև իտալերէնը, օրինակ, իսկապէս գրական լեզու դառնար, պիտի դեռ դարերով մարտնչէր, դեռ դարերով իրան կրթէր: Ահա ինչպէս է նկարագրում մի ֆրանսիական գրականագէտ այն ատիճանները, որոնց պիտի անցնէր յիշեալ լեզուն մինչ նա դառնար իսկապէս գրական: Մենք այն կտորը առաջ ենք բերում, որովհետև նորա մէջ կան մի քանի կէտեր, որոնց մինը այս գրուածքի ընթացքում արդէն չօշափել ենք, իսկ միւս կողմից օտարների հայեացքներից նաև հայ ընթերցողը կարող է իր սեփական լեզուի համար օգուտներ քաղել: «Իտալերէն լեզուն անկասկած ֆրանսերէնի միահասակ քոյրն է և, երեի նոքա մի և նոյն ժամանակումն են սկսել զարգանալ. բայց առաջինը երկար ատեն անչափահաս է մնացել, և լատիներէնը, որը աւելի սովորական էր Իտալիայում, երկար իր խնամատարութեան տակ պահելով նորան, նաև երկար մանկութեան մէջ է պահել:

XI և XII դարերում, ֆրանսերէնը ոչ թէ միայն խօսակցութեան և գրութեան, այլ և գրական լեզու է դառած արդէն: Կարծես նա սպասում էր հազարերորդ տարվայ վերջը և միջին դարերի զարթումը դէպի կեանք, երկար յոյսերի և ընդարձակ մտքերի մէջ ընկղմելու համար, որ ստեղծէ իր վանքերի ժամանակակից պօէմներ: Մի և նոյն ժամանակվայ ընթացքում, Իտալիայում իտալերէնը սարքվում է ազգի չրթունքների վրա, որը կարծում է թէ իր հայրերի լեզուն է խօսում. բայց նա դեռ լատիներէնի անունն է կրում, իսկ իսկական լատիներէնին քերականի անունն են տալիս: Դեռ ոչ ոք չէ կասկածում, թէ իտալերէնը իր կանոնները ունէ. գրութեան մէջ նա դեռ չէ գործածվում:

XIII-րորդ դարում ֆրանսերէնը, բոլոր միւս լեզուներից առաջանալով, աւելի հեշտ մուտք է գործում Իտալիայում, քան մի որ և իցէ այլ եւրոպական երկրում. Նորան հասկանում են, շատերը մինչև անգամ խօսում և գրում են Իտալիայում: Սակայն իտալերէնը լսել է տալիս իր երգերը. դոքա իր առաջի ոտանաւորներն են: Արձակ շարադրութիւնը (La prose) սկսում է, բայց այդ սկզբունքները սակաւ են և անհամարձակ, և որովհետև ֆրանսիացիները լաւ խօսելու արհեստի վարպետներ են, ով ցանկանում էր գրել և ուրիշներից կարդացվել, բայց լատիներէն չը գիտէր, գրում էր ֆրանսերէն:

XIV-րորդ դարում դերերը փոխվում են, Իտալերէն լեզուն յաղթական մրցութիւն է սկսում. երբեք հանճարեղ մարդկանց իրար հանդիպելը (Դանտէ, Պետրարք և Բոկկաչիո) և հնութեան վերածնունդը հաստատում են իտալերէնի առաջնակութիւնը որը և տեւում է ամբողջ XV-րորդ դարվայ ընթացքում:

Բայց XVI-րորդ դարում կրկին վում է հաւասար այժերով. XVII-րորդ դարում ֆրանսերէնը սկսեց հետևել իտալերէնին, յետոյ, նախանձութիւնից, սկսեց հեռանալ, իսկ XVIII-դարում նա արդէն սկսում է յարձակվել Իտալերէնի վրա: Բուսսոն սիրում է իտալերէնը, որպէս զուարճութեան դուստր, և նայում էր հիւսիսային լեզուների վրա, որպէս կարիքի դուստրներ. նա հեռու չէ ճշմարտութիւնից, ասելով թէ Իտալերէնը դատելու համար հարկաւոր է նրան լսել, իսկ Ֆրանսերէնը գնահատելու համար հարկաւոր է նրան կարդալ: Վոլտերը, որը չատ գեր է դասում Իտալիայի բանաստեղծներին, մերժում է Իտալական լեզուի իսկական ներդաշնակութիւնը, որ է՝ բազմակերպութիւն (l'harmonie de la variété). Ի զուր էր չարչարվում Բոտենելլին Վոլտերի իտալական արտասանութիւնը ուղղել, սա մեղադրում էր այդ լեզուն միակերպ վերջաւորութիւններ ունենալու համար.

(L. Etienne, Histoire de la litterature italienne).

Սորանով վերջացնենք մեր յօդուածը. հաւատի լինելով, որ մեզ գոնէ մասամբ աջողված կը լինի մեր աշխարհիկ լեզուի մի քանի դեռ մութը հարցերի վրա փոքր ինչ լոյս տարածել.

1880 թ. Սորասբուրգ Ա. Ա.